

**ՀԱՅՏԵՐԵՆԻ ԲԱՂՉՅՈՒՄԱԿԱՆ ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Քանապիւ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բաղճյունական բարդությունները կազմվում են ինքնուրույն, առանձին գործածություն ունեցող բառերի հարադրությամբ և այդ պատճառով իրոք հարադրական բարդության մի տեսակ են հանդիսանում: Իբրև այդպիսին, նրանք հատկանշվում են այն առանձնահատկությամբ, որ հարադրող բաղադրիչներն իրար հետ կապում կամ միահյուսում (բաղադրում) են ու (երբեմն՝ են) համադասական շաղկապով¹, ինչպես, օրինակ՝ աջ ու ձախ, բառ ու բան, գունդ ու կծիկ, դուրս ու ցավ, նա ու առաջ, զենք ու զրահ, լաց ու կոծ, խեղճ ու կրակ, ծաղր ու ծանակ, կարգ ու կանոն, հարց ու պատասխան, մարդ ու կին, պարտ և պատշան, բիթ ու մոուր և այլն: Իսկ դա ինքնին ցույց է տալիս, որ հայոց լեզվում ու համադասական շաղկապը ոչ միայն հանդես է գալիս նախադասության համադր անդամները (օրինակ՝ «Գեղեցիկ ու հիասքանչ է մեր հայրենիքը», «Դյուղեռն ու քողաքները բարգավաճում են») և կամ համադր նախադասությունները (օրինակ՝ «Արևը ծագեց, ու մարդիկ սկսեցին իրենց աշխատանքները») կապակցելու գործառույթով, այլև բառակազմական որոշակի դեր է կատարում, որը և բնականաբար պայմանավորվում է նրա իսկ արտահայտած նշանակությամբ:

Իբրև միավորիչ համադասական շաղկապ, ունեցող ընդհանուր առմամբ, այլ շաղկապների պես, առտաբին աշխարհի իրողությունների, երևույթների միջև դասերվող ինչ-ինչ կապեր ու հարաբերություններ է արտահայտում² և համապատասխանաբար խոսքի մեջ շարահյուսական կապակցական դեր կատարում, ասլա հարադրական բարդությունների մեջ, ի տարբերություն այլ շաղկապների, նա որպես բառակազմական բաղադրիչ է գործածվում: Նշանակում է՝ ու շաղկապը ոչ միայն բառահարսման կամ սոսկ շարահյուսական, այլև բառակազմական-բառաստեղծական էություն է և իբրև այդպիսին որոշակի դեր է կատարում հայերենի բառակազմության, բառապաշարի հարստացման գործում:

Իվ իսկապես՝ ու շաղկապը այն գլխավոր օղակն է, որը իրար է կապում հարադրող բաղմազան բնույթի բառեր և կազմում բաղմաբանակ բաղճյունական բարդություններ, որոնք իրենց յուրահատուկ ձևաբանական կառուցվածքը, իմաստարանական կազմը, բառակազմական ու քերականական առանձնահատկությունները, ոճական-ոճաբանական արժեքը և կիրառական նշանակությունն ունեն:

Ու շաղկապը բառակազմական արժեք է ստացել իր իսկ արտահայտած իմաստի շնորհիվ: Հայ լեզվաբանական գրականության մեջ վաղուց է նկատված ու արձանագրված, որ բառերի միջև ամենասերտ կապն ու հարաբերությունն արտահայտող շաղկապը ունեցող, որ այդ տեսակետից տարբերվում է անգամ իր հոմանիշ և շաղկապից: Հայ մշակույթի մեծ երախտավոր Ստ. Մալխասյանցի հավաստմամբ ունեցող «կապում է իրար հետ սերտ առնչություն ունեցող երկու բառ կամ նախադասություն, որպես թե կցում է նրանց, այնպես որ առաջին բառը հաճախ չի հոլովվում երկրորդի հետ»³։ Կամ՝ «Գրական լեզվի մեջ գործ են ածվում թե՛ և, թե՛ ու. ունեցող ավելի մեծավոր մտքեր կամ առարկաներ կապելու, և-ը ավելի հեռավորներ (ընդգծումը իմն է— Ա. Մ.)»⁴։

¹ Ուստի սխալ է կարծել, թե ու և և շաղկապները համարժեք են, և նրանցով հավասար բանակով բաղճյունական բարդություններ են կազմվում:

² Ու, ինչպես նաև և համադասական շաղկապների մասին տե՛ս Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1965, էջ 655: Գ. Գրիգորյան. Շաղկապները ժամանակակից հայերենում. Երևան, 1963, էջ 94—98, 111—129 և այլն:

³ Դա դեռևս Ստ. Պալասյանյան է ժամանակին նկատել իր «Քերականություն մայրենի լեզվի» աշխատության մեջ (Թիֆլիս, 1906, էջ 133):

⁴ Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան. հ. 3, Երևան, 1944, էջ 590:

⁵ Նույն տեղում, հ. 1, Երևան, 1944, էջ 604:

Նույնն է հաստատում նաև Ս. Աբրահամյանը, առելով. «Որ ինչպե՞ս ու շաղկապ բառերի ավելի սերտ հարաբերություններ է արտահայտում և շաղկապի համեմատությամբ՝ վկայում է, ի միջի այլոց, նաև այն փաստը, որ բաղնիշում բարդությունների (ինչպես և դրանցից առաջացած կցականների) բաղադրիչները միանում են սովորաբար ու-ով. ինչպես՝ անց ու դարձ, ասուլիս, ախ ու վախ, ել ու մուտ. աղ ու հաց. տուն ու տեղ. նիստ ու կաց. սար ու ձոր. մարդ ու կին, հարցափորձ և այլն»⁶:

Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե ու-ն բոլոր դեպքերում ու բոլոր տեսակի բառակապակցություններում ճիշտ միատեսակ հարաբերություն է արտահայտում. թե ամեն անգամ հարադրվող բաղադրիչները ճիշտ միատեսակ կապով են կապվում իրար հետ: Ամենևին. հանդես գալով բազմաթիվ ու բազմատեսակ բառակապակցությունների մեջ, դրանց բառ-բաղադրիչների նշանակության ու առնչակցության համապատասխան այն ոչ թե ճիշտ միատեսակ, այլ արատստիճան հարաբերություններ է արտահայտում: Այստեղից հետևում է, որ բառակապակցության բաղադրիչները ինչքան սերտ հարաբերությամբ են կապվում իրար հետ, այնքան էլ ու-ն զրկվում է շաղկապական նշանակությունից. դառնում բառակազմական լեզվական միավոր և առաջ բերում բարդություն: Եվ, ընդհակառակն, բառակապակցության բաղադրիչներն ինչքան թույլ կապով կամ հարաբերությամբ են կապվում իրար հետ, այնքան էլ ու-ն մնում է լեզվի շարահյուսական մակարդակում, զուտ իբրև շաղկապ է գործածվում և թույլ չի տալիս, որ այն չեղարկվի բարդության: Բայց ու շաղկապով բառակապակցությունները քանի որ շատ, բազմաթիվ ու բազմաբանակ են, ուստի նրանք նաև բազմազան ու բազմաբնույթ պատկեր են երևան հանում, հատկանշվում թե՛ բառերի զուտ սովորական շարահյուսական կապակցություններով, թե՛ ավարտված բարդություններով և թե՛ անցման՝ բառակապակցությունից բարդության վերածվելու իրողություններով:

Այլ կերպ լինել չի կարող, որովհետև ինչպես այլ, այնպես էլ այս դեպքում բառակապակցություններից ոչ թե հեշտ ու անմիջականորեն, այլ լեզվի զարգացման ընթացքում՝ խմորումների ու հեղարեկումների ճանապարհով են բարդություններ ստեղծվում: Դա լավագույնս հաստատվում է լեզվի պատմական փաստերով. ու շաղկապը, որ ծագում է «հնի», օրի ձևից և «հնի» (<epi) ձևի կրկնակն է⁷, գալիս է շատ հեռավոր անցյալից և գործ է ածվել, անշուշտ, ոչ միայն գորարարան, այլև նախագորարարան շրջանում: Բայց, այնուհանդերձ, ինչպես փաստերն էն ցույց տալիս, անցյալի գրավոր աղբյուրներում ու շաղկապը թե՛ ինքնուրույն կիրառությամբ և թե՛ բառակապակցությունների մեջ իրիստ հազվադեպ է պատահում. «ու և»,— գրում է Հր. Աճառյանը,— հենրի մեջ անկախաբար շատ քիչ է գործածված. օր. Ջմանկտույզ գրոյց Խոսիք ու զաղփաղփուփին. Ոսկ. երո. ժա—Գարգմանակ (դա հատորում սխալաբար Գարգմանակ է տպագրված—Ա. Մ.) ոսկի ու արծաթ ու ի պատիւ գլխոյ՝ հանգոյցք թաղի. Բուզ. և. 3Տ. բայց այս է. նման ձևերը կարող են հետին ներմուծություններ լինել: Ավելի հաճախ գտնում ենք բարդությանց և ածանցմանց մեջ՝ որոնք նվազ կասկածելի են. Ինչ. Եօրնուտասն, Եօրնուտասնի-բուզ ՄԳր. ուրուտասն, ուրուտասնեբուզ ՄԳր. պարտուպատշան Ոսկ. ևս և մ. ա. 13. Եփր. արին. և թղ. մարտուպատշան Կոչ. զինչուզինչ Ոսկ. մտթ. ա. 19. Կարգուփուրձ Յոր. լա. 14. ուրուտին. ՄԳր. և մանավանդ իբրու և իբրև Սգաթ...»⁸:

Այդպես՝ ու է և շաղկապները համեմատելով իրար հետ, Աճառյանը մի այլ տեղ ևս գրանում է, որ նրանք «գորարարի մեջ թեև հավասար հնություն ունեն, բայց միեղեղև և (դա գրքում սխալմամբ չի ընդգծված—Ա. Մ.) առատ ու անկախ գործածություն ունեն, ու շատ քիչ էր երկվում է այն է, բառերի բարդության մեջ. այսպես՝ ուրուտին և այլն»⁹ թեև իրավոր գործը, ուրուտև և ուրևտասն «ստասնութ», իբրու և իբրև»⁹:

Ու անհերքելի իրողություն է, որը մի կողմից ցույց է տալիս, որ գրարարում հարգի ու ընդունված է եղել և շաղկապը, որ ճնշել է ու-ին, փակել նրա ազատ մուտքը դրականության մեջ, իսկ մյուս կողմից հավաստում է, որ ու շաղկապը իրոք գալիս է դարերի խորքից և լայն

⁶ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պատմական, 2. Ա. Օհանյան, Փաստական-կից լայն լեզու. 5. 2, Երևան, 1974, էջ 525:

⁷ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան. հ. Գ, Երևան, 1977, էջ 589. հ. Բ, Երևան, 1973, էջ 70:

⁸ Նույն տեղում, հ. Գ, էջ 589:

⁹ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. 5, Երևան, 1965, էջ 274:

գործածությունն է ունեցել, անշուշտ, կենդանի ժողովրդագիտական լեզվում: Հայ հին գրա-
կան լեզվում՝ գրաբարում, և-ը փոխադրվել է ու-ին և հիմնականում ինքը հանդես եկել նաև
բառակազմական գերով: Եվ իսկապես. ու շարկապով բարդությունները գրաբարում եթե սա-
կավաթիվ են, ինչպես այլուծի («Եւ անօրէն ճակեալ տագնապէր զայրուծին յառաջ արա-
կէ...», *Նդիշի, էջ 49*), դկուտէպ, եղումարդ, զինուզինչ, հարցուփործ, մարքոպատշաճ, յա-
ռովակն. շէ ու շիֆ, պարտ ու պատշաճ, պարտ ու պարտիֆ, տարութեր, ֆար ու ֆանդակ և
այլն¹⁰, ապա և ուով կազմվածներն, ընդհակառակն, առավել են ու շատ, ինչպես՝ առեակզ/՝
առեակն (առեակզել/յառեակնել, առեակզարիկ), առ և ապուր, առ և աւար, առ և զեցց առնել,
այլ և այլ, այրենի, այց և խնդիր («...և ոչ կայո նոցա այց և խնդիր», *Մ. հորենացի, 348*),
աստի և անտի («Եւ յարձակեալք աստի և անտի մեծաւ տագնապաւ ի միմեանս հասանէին»,
Սերետս, 68), բոկ և քնտի («...բոկ և քնտի վարէին զարս և զկանայս փափկատունս», *Նդիշի,*
81), դկ և դկա. դուլ և դադար, դուլ և պատուէր. էլ և էլ/էլէկս (առնել), էլ և էջ (էլ և էջէ)
հյ և մուտ (մու և մուտի), երբեկ (երթեկես առնել/յառնուլ, երթեկեկել, երթեկելութիւն), իսկ և
իսկ («Որոյ յոռացեալ զհաշտութիւն՝ իսկ և իսկ թագաւորելն դիմէ ի վերայ զօրացն Յունաց...»,
Մ. հորենացի, 442), բոկ և բոկ/բոխ և բոխ, հառեակնցի (հարեակնցիկ, հարեակնցիկ առնել, հա-
րեակնցել), հարց և խնդիր, հարց և փորձ, հարց և քինն, ձև և շուֆ («Նա և թագաւորութեան ձև
և շուֆ յոռատեալք», *Մ. հորենացի, 256*), մատն և տուր լինել, յար և հաճապագ, յար և յար-
մար, յար և նման, նախ և առաջ, նախ և առաջին, ողջ և առողջ («Ողջ և առողջ հասուցեալ յա-
ւուրս Երեսուն», *Նդիշի, 80*), պարս և պատշաճ, ի վիւր և խոնարհ, տուր և առ (տուրեառիկ,
տուրեառիկք, տուրեառութիւն), տրտում և տխուր («...Ոչ ինչ տրտում և տխուր զերեսս ցու-
ցանէին հրապարակին», *Նդիշի, 44*), ցան և ցիր («...ի յուզվ տեղիս գտանէին բնակեալք ի
մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր սակար...», *Մ. հորենացի, 39*), ցիր և ցան, փուլ և տա-
ւալսլ («Ե՛ք ամբմինդ քո բուսցի փուլ և տաւալսլ», *Փ. Բուզանդ*), ֆաշ և աբի («Քաշ և աբի
երեւալ քան ցկերիլէս...», *Մ. հորենացի, 334*), օն և օն և ալն¹¹:

Ըստ որում դժվար չէ նկատել, որ ու եւ շաղկապով ոչ միայն բաղճյուսական, այլեւ կցական բարդութիւններ են կազմվել: Իսկ դա նշանակում է, որ նրանք բառակազմական արժեք են ստացել դեռեւ վաղ շրջանում, թէն միաժամանակ նման ընթացք ու ճակատագիր չեն ունեցել: Թէն գրաբարում ե-ով կազմված շաղկապական՝ բաղճյուսական եւ կցական բարդութիւնները ավելի սովորական են, ապա միջին ճայերենում նրանք նվազում, և, ընդհակառակն, դերիշխող են դառնում ու-ով ձևերը. ճմմտ. ա) դափ եւ քմբուկ («Գափ եւ քմբուկ անցուցանել չէ բական», Պ. Ղափանցի), լաց եւ հառաշ («Լաց եւ հառաշ, ի յողջ մշտան, Վաշ կանչեցին միաբարան», Հ. Թոխաթցի), ծով եւ ցամաք («Սարսուր յինչեւ ծով եւ ցամաք», Ս. Ապարեանցի): Եւս եւ հնար («Ո՛շ Երբէք, եւ գտանեմ ի՞նձ եւս եւ հրնար», Պ. Ղափանցի), որք եւ այլի («Եւս, ե-դեմիս», Ուրհա բաղար, Որդեկորոյտ, որք եւ այլի», Ն. Շնորհալի), ցաւ եւ վիշտ («Մինչեւ ես յաստիս, ոչ ինչ օգտիս, թէպէտ կըրնս զցաւ եւ վիշտ», Պ. Ղափանցի), փուշ եւ տառասկ («Փուշ եւ տառասկ ի սմա բուսաւ», Ս. Շնորհալի... և բ) առուտուր («Նայ շունին ճանճի մի ուժ ոչ առուտուր ոչ ալ խօսիւ», Հ. Թլկուրանցի, 325), իշէր եւ ցորեկ («Իշէր եւ ցորեկ եւ եմ երեբուն», Գր. Աղթամարցի, 424), բոց ու հուր («Բըլբուր, չոգովդ եւ դու մաքուր, Սըրտովտ ի լի եւ բոց ու հուր», Կ. Եղնկացի, 255), խունկ ու մոմ («Խունկ ու մոմ առեր, քեզ ուխտ եմ եկեր», Ղ. Սերաստացի, 460), եղուկ ու վաշ, հաւսն ու փեսայ («Եղուկ ու վաշ ճապար բերան, զինչ գործեցաւ, Հի նորասէդ հաւսն ու փեսայն բաժանեցաւ», Մ. Նաղաշ, 341), ծով ու ցամաք («Ազգի-ազգի սողուն, թըռչուն, Մով ու ցամաք, թէ զինչ որ կայ...», Մ. Թոխաթցի, 482), կանաչ ու կարմիր («Կանաչ ու կարմիր տերեւ ճաչեցին», Գր. Աղթամարցի, 412), մեծ ու փոքր («Զայս չարացանէդ տէրն ամէնի, Որ մեծ ու փոքրն ճանայի», Տրիկ, 172) և այլն:

Նույնը մենք ավելի որոշ արտահայտված ենք տեսնում XIII դարի նշանավոր բանաստեղծ

10 Դրանց մասին տե՛ս նոր բառգիրք Հայկազեան լեզուի. հ. 1 և 2, Վենետիկ, 1836—1837: Առձեռն բառարան Հայկազեան լեզուի. Վենետիկ, 1865:

11 Տե՛ս դրանց մասին նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 1, 2: Առձեռն բառարան հայկազեան լեզուի. 2-րդ տպ., այլև՝ եզիշե. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. Երևան, 1937: Մ ո վ ս ե ս հ ո Ր Ե Ն ա ճ թ. Պատմություն Հայոց. Տփղիս, 1913, նաև՝ դրա վերահրատարակությունը (Երևան, 1981): Ս ե բ Ե ո. Պատմություն. Երևան, 1979: Գրաբարում հիմնականում ե-ով են կազմվել նաև հարադրյալ թվականները, ինչպես՝ երբ եւ տասն, ութ եւ տասն, քսան եւ մի, իսկուն եւ երեք, քառասուն եւ երկու, երեսուն եւ չորս եւ այլն:

Ճորիկի տաղերում: Այդտեղ և-ով կազմված բաղադրությունները, օրինակ, աջ և աճեակ, դառն և ողորմ, երկինք և երկիր, խաղճ և առակ, ծագր և ճշտակ, ճայր և մայր, ճող և մոխիր, ճուր և կրակ, միշտ և հաճապագ, ուրբ և ալրի, տուն և տանաւ, փառք և պսակ... *Եթե մի երկու տասնյակի շէն հասնում, ապա ու-ով ձևերը բավականին մեծ թիվ են կազմում, ինչպես՝* աջ ու ձախ, աւաղ ու եղով, բաս ու կատակ, բերդ ու քաղաք, գանձ ու գումար, գիշեր ու ցերեկ, գույք ու աղէտ, դառն ու լեզի, դեղ ու ճար, քաւ ու դանակ, խելք ու միտք, խոճաւրդ ու ճեղ, ծով ու ցամաք, կայ ու կաս, կեր ու խում, ճամար ու ճաշիկ, ճաստ ու կարճ, ճիւղ ու կէս, ճուր ու բող, ճոտ ու ծառայ, մալ ու գանձ, մալ ու մուլք, միտք ու ճողի, մուրք ու խաւար, ճախ ու ճաւիթ, ճուր ու ճիւղ, ճահ ու ճէն, ճտք ու ճեմ, ուրբ ու ճերի, ճար ու ճախանձ, տուն ու տեղ, ուղորդ ու յիտակ, փոքր ու մեծ և այլն:

Նման փաստերը ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայոց լեզվի զարգացման ընթացքում և շարկապն աստիճանաբար կորցրել է իր բառակազմական ուժը, իսկ ու-ն, ընդհանրապես, հարադրությամբ բաղճյունական բաղադրություններ կազմելու առավել մեծ հատկություն է ձեռք բերել, իսկ դրանում, անշուշտ, կարևոր դեր են խաղացել երկու հանգամանք, մեկ՝ այն, որ ու շարկապն ի սկզբանե հատուկ է եղել կենդանի ժողովրդախոսակցական լեզվին և, բնականաբար, ժողովրդական բնույթի բաղադրություններ է կազմել, մեկ էլ այն, որ նույն այդ հիմքով զուր նա իմաստապես «հեռացել է» հոմանիշ և շարկապն, արտահայտելով ավելի սերտ հարաբերություն առնչակից բառերի միջև:

Եվ իրոք, անվիճելի է, որ միավորիչ կամ միանման նշանակություն արտահայտող համադասական շարկապններ լինելով, նրանք, այնուամենայնիվ, իմաստային առումներով տարբերվում են իրարից: Ու շարկապն եթե առնչակից բառերի միջև դրսևորվող ավելի սերտ կապեր ու հարաբերություններ է արտահայտում և շատ հաճախ շատ բառակապակցություններ բարդություններ դառնում, ապա և-ը տարանջատ միասնական հարաբերություն է արտահայտում և կապակցվող բառերից մեծ մասամբ սովորական շարճյունական կապակցություններ կազմում, կատարելով ոչ թե բառակազմական, այլ շարճյունական դեր: Դրա համար էլ, անգամ անդրադառնալով, երբ փոխարինաբար ու-ով և և-ով միատեսակ բարդություններ են կազմվում (համար, քրիստոս, այս ու այն—այս և այն, այլ ու կին—այլ և կին, աջ ու ձախ—աջ և ձախ, դաշտ ու հունդ—դաշտ և հանդ, ետ ու ստաշ—ետ և առաջ, լուռ ու մունջ—լուռ և մունջ, մեծ ու փոքր—մեծ և փոքր, ողբ ու առողջ—ողբ և առողջ...), նրանք դարձյալ լինելի շէն համընկնում, և առերևույթ բառերի միջև ու-ով ձևերը ավելի սերտ հարաբերություն են արտահայտում, քան և-ով ձևերը: Այստեղից՝ եզրակացություն, ժամանակակից հայոց լեզվում ու համադասական շարկապն է բառակազմական դեր կատարում և բաղճյունական բարդություններ կազմում, որոնք և իրենց որոշակի տեղն ու տեսակարար կշիռը, իրենց համապատասխան դիմանկարն ու համակարգն ունեն այնտեղ:

Բայց, սա, իհարկե, չի նշանակում, թե բառերի՝ ու շարկապնով կապվող բոլոր տեսակի կապակցություններից անխտիր բաղճյունական բարդություններ են կազմվում, և կամ թե՝ ու շարկապնով իրար հետ կապակցվող բոլոր բառերը արդեն բաղճյունական բարդություններ են, ամենևին էլ ոչ:

Ու շարկապն միջոցով բաղճյունական բարդություններ են կազմվում այնպիսի բառերի հարադրությամբ, որոնք իրար առնչակից նշանակություններ և բնականաբար նաև՝ պատկանում իրար հետ: Երբ, այդպիսին լինելով, սակայն, դեռևս ամեն ինչ չէ, բաղճյունական բարդություն կազմության համար կարևոր ու էական նշանակություն ունի հարադրվող բառերի նաև ընդհանուր ձևավորական կառուցվածքը՝ նրանց կառուց, թե երկու լինելով:

Փաստերը ցույց են տալիս, որ ինչպես անցյալում՝ զորարարում ու միջին հայերենում, այնպես էլ ժամանակակից հայոց լեզվում ու բարբառներում բաղճյունական բարդություններ են կազմվում գերազանցապես կարճ բառերի հարադրությամբ: Եվ իսկապես, նրանք կազմվում են.

ա) Միավանկ բառ+ու+միավանկ բառ բաղադրություններով, ինչպես՝ աղ ու հաց (փոխ), ամպ ու բալ (գուլ, դամպ, ծուխ, մեղ, շանթ), ալք ու ունք (ձեռք, միտք, շուրթ, սիրտ), աւա ու ալի (կալ, հանդ), բակ ու դուռ (տուն), բան ու ձեմք (հող, մաճ, մուրճ), բառ ու բան (խոսք, ուճ), բուր ու փոքր (ձյուն, մութ), գիր ու քուղը (կապ, տառ), գործ ու բախտ (րան, խոսք,

կարգ, *մործ), երգ ու խաղ (կանչ, ճիշ, պար, սեր, վանկ, վառող, վեպ, տաղ), քաղ ու բռն (շոր, ցեխ), բույս ու ծառ (խոտ, շիվ, բար, բու), լեռ ու բեր (գետ, դաշտ, ժայռ, հանդ, ձոր, բար), խինդ ու լաց (ծափ, սեր, վերք, վիշտ, ցավ), ծառ ու բույս (ժայռ, ծիլ, վաղ, արուղ, տունկ, քար, բու), կալ ու արտ (կապ, կաս, կուտ) և այլն:

բ) Միավանկ բառ+ու+երկվանկ բառ բաղադրիչներով, ինչպես՝ ան ու երկյուղ (զարդանդ, կսկիծ, սարսափ, տագնապ), ամս ու դաման (լուսին, կալծակ, որոտ, փոշի), բունտ ու օխտ (զնդան, կապանք), բերդ ու ամրոց (պարիսպ, վահան, վրան, բաղաք, բարափ), գետ ու ատո (առվակ, գետակ, վտակ, ցամաք), դար ու դաղար (դալար, դարափ, դուրան), բույր ու գրիշ (թանաք, մատիտ), խինդ ու եռանդ (խայտանք, խոռվք, կորով, վայելք), խոտ ու առակ (երդում, դուլց, թմրով, ժողով, խոտում, խորհուրդ, ծիծաղ, կոփ, հայացք, շարժում, ձաղր ու ծանակ (լուտանք, ծիծաղ, կատակ), ծափ ու ծիծաղ (ծալիտ, խնդում, ծաղիկ, հանգիս), կարգ ու կանոն (լեզու, օրենք, պատշաճ), հարգ ու պատիվ (հմայք) և այլն:

դ) Միավանկ բառ+ու+եռվանկ բառ բաղադրիչներով, ինչպես՝ ազգ ու բարեկամ («Իսկ հիջ ազգ ու բարեկամ էլի ասում էին...», ԱԲ, Ե, 1, 101), ախ ու հառաչանք («Լսե ախ ու հառաչանքս, լսե աղաղակս, շուտ ե՛կ», ՋԲ, 402), անդ ու անդաստան («Ան սարսափն է բուր սնունդ՝ որ կ'ավրեն անդ ու անդաստան», ԴՎ, Բ., 390), զան ու զավազան («Նա ևս, թողնելով արքայական զան ու զավազանք..., սկսում է լննելու ճգնաժողովական կյանք վարել», Բ, ԵԺ, 5, 145—46), փղ ու ավազակ («Գող ու ավազակ էստեղ դարերով բուն են գրել», ԽԱ, ԵԺԺ, 3, 171), դուռ ու լուսամուտ («Փոքրիկ խոտի դեզը արդեն ճարակել, բռնել է արդեն դուռ ու լուսամուտ», ՆՁ, ՄԶ, 356), բույ ու նախադիմ («—Ամոթ քեզ, Մոսի, բույ ու նախադիմ», ՀԲ, ԵԺ, 2, 60), կար ու կարկատան («Կար ու կարկատան ծնկներին առած Շարված են կանայք նիհար, տխրադեմ», ՇԿ, ԵԺ, 441) և այլն:

դ) Միավանկ բառ +ու+բազմավանկ բառ¹² բաղադրիչներով, ինչպես՝ զան ու հստակություն, գուր ու ողորմություն, երգ ու երաժշտություն, երգ ու ոտանավոր, քաղ ու քաղվորություն, լույս ու արդարություն, խալ ու խայտառակություն, խալ ու ավետարան, խալ ու գեթեզման, խալ ու բանականություն, ծափ ու ռեզոնանսություն, կապ ու հարաբերություն, միտ ու բանականություն, ոխ ու ասելություն, վանկ ու եկեղեցի, ուծ ու կարողություն, փող ու հարսություն և այլն¹³:

Բնագրային օրինակներ. ննջում են ան ու տառակուսանով (ԴՆ, ՄՈ, 435), եվ ինչ որ զան ու հարսություն ունեն, Բուրն էլ ժողովեցին (ՂԱ, ԵԺ, 2, 256), Մեր հյուրանոցում ամեն երեկո հայկական երգ ու երաժշտություն կա (ԽԴ, ԲԿ, 473), Աշակերտները սովորում էին երգ ու ոտանավոր (ԱԲ, Ե, 1, 155), Մի օր նա... լույս ու արդարություն կսփռե հայոց աշխարհում (Բ, ԵԺ, 5, 72), Տառապալ ժողովուրդը պայման է կապում ու միակամ հոգարությունը խալ ու ավետարանի վրա երգվում (ՀԲ, ԵԺ, 318), Վանկ ու եկեղեցում գրի տված մատաններն են ստուգում տառից տառ (ՎԽ, ԳԼ, ՎԻԿ. 1, 130), Նրանք էլ կհավատան, որ գոյություն ունի Ձմեռ պապի՝ կախարդական ուծ ու կարողությամբ (ԳՄ, ԵԺ, 3, 433) և այլն:

Դրանք, սակայն, ամեննին էլ նույն քանակային ու որակային կշիռը չունեն. բաղձյուսական բարդությունների մեջ գերիշխող են նախ՝ միավանկ բառ+ու+միավանկ բառ և ասլա՝ միավանկ բառ+ու+երկվանկ բառ բաղադրիչներով կազմությունները, իսկ մյուսները՝ թե՛ միավանկ բառ+ու+եռվանկ բառ և թե՛ մանավանդ, միավանկ բառ+ու+բազմավանկ բառ բաղադրիչներով կազմվածները ոչ միայն քանակով են մեծապես զիջում նրանց, այլև իրենց վերջին բաղադրիչի երկարության պատճառով ավելի շատ են հարուստ բառերի սովորական շարձյուսական կապակցություններին և շատ դեպքերում բարդավաճ մեծ նրանց կապանքներում:

Հնայած դրան, ներկայացված բաղձյուսական բարդությունները ընդհանրապես ու միավորվում են մի հատկանիշով: Նրանց կազմում առաջին բաղադրիչը արտահայտվում է միատեսակ՝ միավանկ բառով, հմմտ. հարց ու փորձ, հարց ու գրույց, հարց ու պատասխան. ան ու ստուգափ, ան ու տխրություն, ան ու տառակուսանք. երգ ու պար, երգ ու եվազ, երգ ու եղանակ, երգ ու երաժշտություն. մարդ ու կին, մարդ ու զագան, մարդ ու կենդանի. քաղ ու զան, քաղ ու պսակ, քաղ ու քաղվոր, քաղ ու քաղվորություն և այլն: Իսկ դա ինքնին ցույց է տալիս:

¹² Դա կազմված է լինում չորս և ամենից՝ շատ՝ հինգ վանկից:

¹³ Նման բաղձյուսական բարդությունների 2-րդ բաղադրիչը մեծ մասամբ —ություն ածականով կազմված գոյական է լինում:

որ բաղձնական բարդությունների առաջացման ու կազմավորման մեջ իրոք էական ու վերահսկողական դեր են կատարում միավանկ բաղադրիչները. որ բաղձնական բարդություններն ... բարդությունը կամ մասամբ խառնվում են միավանկ բաղադրիչների վրա. և հիմնականում էլ հենց դրանք են. որ ու շաղկապով բաղձնական բարդություններ կազմելու հնարավորություն են ընձեռում:

Այսքանից, սակայն, չպետք է եզրակացնել, թե հայերենում առանց նախադաս միավանկ բաղադրիչի բաղձնական բարդություններ չկան կամ չեն լինում: Ինչպես դարձյալ փաստեն են ցույց տալիս, հայերենում բաղձնական բարդություններ են կազմվում նաև՝

ա) երկվանկ բառ+ու+միավանկ բաղադրիչներով, ինչպես՝ աղմուկ ու ճիչ, աղբառ ու խեղճ, ամիս ու կես, առաջ ու ետ, առեր ու հանդ, աշուն ու մահ, գիշեր ու գոգ, գրող ու բով, երազ ու տենչ, երես ու ոտք, ծաղիկ ու քուփ, ծիծաղ ու կանչ, կարոտ ու հուշ և այլն:

Բնագրային օրինակներ՝ Զբբ թշնամիք վռտ տան՝ Ախպոր քիկումն ու քուրն է (ՀԾ, ԲՀ, 17), Շաղ են շողում ծաղիկ ու խոտ (ՀԹ, ԵԺ, 1, 136), Նշանակած տեղից կրակ ու բույ է դուրս գալիս և խկույն դադարում (ԳՍ, ԵԺ, 1, 159), Հովիտ ու ձուրեղ արշամբ ծովափն (ՀՀ, ԵԺ, 2, 51), Ով սահմանում է նոր օրենքն ու կարգ՝ Հայտարարվում է և օրենքից դուրս (ՊՍ, ԵԺ, 1, 323), Գիշեր ու գոգ կյանքը դու ես դարձարում (ՎՏ, ԵԺ, 1, 86), Նա դանդաղ անցնում էր սեղանների երկար ու ձիգ շարքերի միջով (ԲՎ, Երկ., 14) և այլն:

բ) երկվանկ բառ+ու+երկվանկ բաղադրիչներով, ինչպես՝ աղի ու լեղի, աղմուկ ու գոլում, աման ու շաման, ալան ու քալան, աշուն ու ձմեռ, անկ ու ջանկ, բողոք ու հառաչ, գիշեր ու ցերեկ, երազ ու մուրազ, երկինք ու գետինք, գրույց ու երազ, խորհուրդ ու խրատ, կշիռ ու աժեխ, կրակ ու պատիժ, հագուստ ու կապուստ, հոգի ու հավատ, ձմեռ ու ամառ, ուկի ու աժառ, շրիճ ու շառաչ, որոտ ու քնդում, օրոտ ու շուրոտ և այլն:

Բնագրային օրինակներ՝ Փող եմ աշխատել իմ աշուն ու քուրնում (ԾԿ, ԵԺ, 371), Զուռ, նաչին փչեց կոխի եղանակ, Անկ ու շահեկ իրարով անցան (ՀԹ, ԵԺ, 2, 58), Այնուհետև մալուս գիշեր ու ցերեկ հանգստություն չունեն (Բ., ԵԺ, 4, 230), Երկինք ու երկիր պատել է արյուն (ՀՀ, ԵԺ, 2, 120), Ինչ կրակ ու պատիժ են երևում անպիտանները (ՊՊ, ԵԺ, 2, 597), Մով էր կարծես, որ սկիզբ ու սանձան չունի (ԵԶ, ԸԵ, 17), Եվ բարավանք՝ օրոտ ու շուրոտ զնգում էր առաջ ու ետ չէր նայում (ԱԻ, ԵԺ, 2, 54) և այլն:

Կան և սահմանափակ թվով բաղձնական բարդություններ, որոնք կազմվում են երկվանկ բառ+ու+եռվանկ բաղադրիչներից (օրինակ՝ աղմուկ ու աղաղակ, անքիվ ու անհամար, բնկեր ու բարեկամ, կոխ ու հաղթանակ, երկառ ու բացակա...), երկվանկ բառ+ու+հառվանկ բաղադրիչներից (օրինակ՝ կոխ ու տուրուղմպոց...) և եռվանկ բառ+ու+միավանկ բաղադրիչներից (օրինակ՝ աղաղակ ու վեն, առտասուր ու լաց, թագավառ ու տեր, ճեփար ու հուշ...) բաղադրիչներով: Մի քանի բնագրային օրինակներ. Եվ քե՛ք լիսի՝ առանց աղմուկ ու աղաղակ (ԳԼ, ԱՏ, 346), Ալիքներն անքիվ ու անհամար Քար-բարափներից թռչում են թափով (ՀՍ, ՆԳԲ, 95), Մառառ ու աղախիճներին... նախապես միջոց տվեց հեռանալու (ՊՊ, ԵԺ, 7, 445), Մայրը լղրաղղում էր լվացն ու կարկատաճում (ԳԲ, ՊՏ, 14) և այլն:

Բայց պետք է ասել, որ այդպիսի բաղձնական բարդությունները ևս հիմնականում կազմվում են կարճ բառերի հարադրությամբ, և նրանց մեծագույն մասի մի բաղադրիչը նույնպիսի միավանկ է լինում, համար, օրինակ՝ ծաղիկ ու քուփ, ծաղիկ ու խոտ, ծաղիկ ու ձառ, ծաղիկ ու հասկ, աղմուկ ու ճիչ, աղաղակ ու ճիչ, շիվան ու լաց, արտասուք ու լաց և այլն, և այլն:

Չնայած դրան, նման կազմությունները, որ, անշուշտ, իրենց հերթին համարում-արտատառում են բաղձնական բարդությունների ընդհանուր կազմը, ոչ միայն առանձնապես շատ չեն, այլև իրենց բաղադրիչների մերձեցման աստիճանով զգալիորեն տարբերվում են սկզբնական միավանկ բառ-բաղադրիչ ունեցող բաղձնական բարդություններից:

Եվ դա հասկանալի է. երկվանկ, եռվանկ, քառվանկ կամ հնգվանկ սկզբնական բառ-բաղադրիչ ունենալով՝ նրանք շատ ավելի են մերձենում բառերի սովորական շարահյուսական կապակցություններին և ավելի թույլ կապ դրսևորում իրենց բաղադրիչների միջև: Այսպիսով՝ բաղձնական բարդությունների ստեղծման գործում իսկապես էական դեր է կատարում բառ-բաղադրիչի կարճ լինելու հանդամանքը, և իսկն ասած՝ դա է հենց, որ հնարավորություն է ընձեռում, որ ու շաղկապով կապակցվող բառերը արտաբերվեն իրեն մի ամբողջություն կամ իրեն մի բառական միություն:

Պատահական չէ նաև, որ բաղձնական բարդություններ են կազմվում ղերադանցապես պարզ-արմատական (օրինակ՝ անց ու զարձ, զար ու վիտ, խաղ ու պար, սար ու ձուր, ամիս ու

կես. աշուն ու ձմեռ, կրակ ու պատիժ...), իսկ ավելի քիչ՝ ածանցավոր (օրինակ՝ աչք ու ունք, խոսք ու երգում, վարք ու բարք, հագուստ ու կապուստ, երկինք ու գետինք, ռոտ ու ձեռք, փառք ու պարծանք...), արմատական և ածանցավոր (օրինակ՝ բան ու խոսք, օր ու կյանք, բերդ ու ամրոց, սուտ ու կեղծիք, երգ ու երածշտույուն, որոտ ու քնդուն, կոնիկ ու ճաղրանակ...), ածանցավոր ու արմատական (օրինակ՝ ձեռք ու երես, զենք ու զրան, սարք ու կարգ, փառք ու պատիվ...), արմատական ու բարդ (օրինակ՝ ազգ ու բարեկամ, դուռ ու լուսամուտ, շափ ու շափանիչ...) բառերի հարադրությունները:

Եման պատկեր ունենալով՝ բաղճյուսական բարդությունները բառակազմական բազմական նետարբեր ու յուրահատուկ համակարգ են ներկայացնում և, իբրև այդպիսին, արտաքին աշխարհի բազմազան իրողությունների ու երևույթների միջև եղած կապերի ու հարաբերությունների արտահայտման լավագույն միջոց հանդիսանում: Ըստ այդմ էլ նրանք կազմվում են հիմնականում նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի պատկանող բառերի հարադրությամբ: Իսկ դրանց մեջ էլ, որ նույնպես հասկանալի է, գերակշիռ տեղ են բռնում հենց գոյական + ու + փոխական բաղադրիչներով կազմված բարդությունները, որոնց մասին պարզ պատկերացում են առաջիկա թերևս հետևյալ օրինակները. հիմա.

բալ	բաց
դոլ	էրդ
զամպ	ծուխ
ծուխ	կայծ
հոլ	հուր
ամպ + ու +	կրակ + ու +
մեզ	շանթ
շունթ	ցավ
շանկ	կարոտ
անձրև	կայծակ
լուման	պատիժ
լուսին	փորձանք
կայծակ	քրտինք
որոտ	պատուհաս...
փոշի	
փաթորիկ	

Գոյականներից հետո զգալի թվով բաղճյուսական բարդություններ հն կազմվում (բացառապես որակական) ածականների (ածական + ու + ածական) հարադրությամբ, ինչպես՝ ալ ու ավան, երկար ու բարակ, քանկ ու էծան, լավ ու վատ, լեռ ու բոլ (բրբ.), լուռ ու մունչ, խեղ ու խուլ, ծանր ու բարակ, կանաչ ու կարմիր, կիսատ ու պոտատ, կոշտ ու կոպիտ, հեղ ու հլու, հաստ ու բարակ, հեշտ ու քեթև, հին ու նոր, մեծ ու փոքր, շատ ու քիչ, շար ու բարի, չոր ու ցամաք, սև ու մուր, սուտ ու սխալ, փուռ ու դատարկ և այլն:

Թվականները ևս մասնակցում են բաղճյուսական բարդությունների կազմությանը. դեռևս դրարարում, ինչպես հայտնի է, և (հազվադեպ նաև՝ ու) շաղկապով քանակական թվականներից հարադրական բարդություններ են կազմվել, որոնց մի մասը անցյալում անգամ կցական բարդություն է դարձել, հիմա. Եօրնուտասն/Եօրնետասն, ուրևտասն/ուրուտասն, իննետասն, Բասն և մի, Բասն և երկու, Բասն և երեք..., երեսուն և մի, երեսուն և երկու, երեսուն և երեք, Բասնուն և մի, Բասնուն և երկու, Բասնուն և երեք, Բասնուն և չորս... և այլն: Դրանք, սակայն, հայոց լեզվի զարգացման ընթացքում, որ նույնպես հայտնի է, փոփոխություն են ենթարկվել: Միջին հայերենում տասնմեկից մինչև տասնին (11—19) թվականները սկսել են կազմվել տասնավորի ու միավորի հարադրությամբ և միաժամանակ բաղադրվել ոչ թե և, այլ ու շաղկապով, ինչպես «Ամսեան ի օգոստոսին, տասնուչորս ատուր կիրային Փոխման սուրբ աստուածածին անօրէնքն զնոսա պատեցին» (Թ. Սեբաստացի, ՀՀՄԲԶ, էջ 442):

Կենդանի խոսակցական լեզվում հազվում ու սովորական են դառնում տասնումեկ, տասնուչորս, տասն ու հինգ (կհասերի, թե Բասն ու հինգ տարեկան տղա ըններ», ՊՊ, ԵԺ, 1, 123), տասն ու վեց, տասն ու ուր... հարադրվող ձևերը: Բայց թե՛ դրանք և թե՛ և շաղկապով հարադրությունները տասն և մեկ (Ռեսը իր տասն և մեկ եղբայրների միջնակն էր», Բ, ԵԺ, 4, 331), տասն և երեք, տասն և չորս..., Բասն և մեկ, Բասն և երկու, Բասն և հինգ և այլն, հետադարձ

աշխարհաբար գրական լեզվում թոթափում և ի վերջո ազատվում են շագկապից. դառնալով տասնմեկ. տասնչորս. տասնհինգ. տասնվեց... փանթակ. փաներկու. փաներեք... փառասունչորս. փառասունհինգ և այլն¹⁴:

Սակայն մի կողմից եթե շագկապական բաղձնական բարդությունները դադարում են այդպիսին լինելուց, ապա մյուս կողմից առաջ են գալիս նոր բաղձնական բարդություններ. որոնք և կազմվում են՝

ա) Զուտ քանակական թվականների հարադրությամբ. որ ուղղակիորեն հաբակցվող թվականների պես (օրինակ՝ մեկ-երկու, երեք-չորս, հինգ-վեց, ութ-ինն, փան-երեսուն և այլն) մերձավոր անորոշ թիվ են ցույց տալիս¹⁵, ինչպես՝ երեք ու չորս, չորս ու հինգ, հինգ ու վեց (հենց կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով. թրով թվանքով արտի գնացիք», ՀԹ, ԵԺ, 3, 174) և այլն: Այդպիսի կազմությունները, սակայն, նախորդներ պատահառով սակավաթիվ են ու տարածում չունեն հայոց լեզվում:

բ) Քանակական թվականի և կես բառի հարադրությամբ. ինչպես՝ մեկ ու կես (Քառակուսի բակը շրջապատված էր մեկ ու կես կանդունալի բարյա պարսպով», Բ, ԵԺ, 5, 94), չորս ու կես (Քառամասային ձոնարկության կոլեկտիվը որոշել է ընթացիկ հեղափոխի պետական առաջարկները... կատարել շորսուկեն տարում», ԵԺ, 25.1. 50, ԱՊ 21), ինն ու կես (—Ամոք էլ է ասելը, Նեկտարից ստացել ենք ինն ու կես ցնտներ ցորեն», ՍՊ, 2, 1, 146) և այլն:

գ) Որևէ քանական. առավելապես՝ ճաշար... թվականի կրկնությամբ. ինչպես՝ հազար ու հազար աշբերով գոհար Քեզ դյուծված, արբած հավերժ նայիք» (ԱԽ, ԵԺ, 1, 114) և այլն:

դ) Հազար կամ հարյուր և մի կամ մեկ թվականների հարադրությամբ, ինչպես՝ հազար ու մի/հազար ու մեկ (Տեսակ-տեսակ մարդիկ եկան գյուղ, հազար ու մի խոսք ասացին, ժողովներ արին», ԱԲ, Ե, 1, 50, «Սեղանի վրա հազար ու մեկ հարցեր էին տալիս ինձ», ԱԽ, ԵԺ, 3, 140), հարյուր ու մեկ (Հարիւր հակ բամբակ կա, հարիւր ու մեկ ծակ կա», ԱՂ, ԱԲ, 101) և այլն:

ե) Քանակական թվականի և որևէ այլ բառի հարադրությամբ, ինչպես՝ հազար ու բյուր (Հազար ու բյուր դժվար դարեր», ՀԾ, ԲԶ, 1, 449), հինգ ու խաչ (Քաղաքանությունից և մայրենի լեզվից միշտ հինգ ու խաչ էր ստանում», ԽԴ, ԲԿ, 12), չորս ու բոլոր (Եժվ էսպես նա չորս ու բոլոր Զէր խնայել հավ ու արևոր», Հ. Ազր., Ծաղ., 26), միևնույն/մեկուսիս (Սա իր ծնողաց միևնույն զավակն էր», ՂԱ, ԵԺ, 4, 327) և այլն:

Բաղձնական բարդություններ են կազմվում նաև դերանունների հարադրությամբ. դեռևս անցյալում մի շարք դերանուններ՝ մեծ մասամբ և շագկապով, այս բառերի հետ կապվելով՝ հարադրություններ են կազմել, ինչպես՝ մի և երկու միևնույն, որ և է՝ ուրեկ, ինչ և իցէ՝ ինչից, երբ և իցէ՝ երբից, ով և է՝ ովեկ, այլ և այլ՝ այլիայլ, զինչ ու զինչ՝ զինչուզինչ և այլն¹⁶:

Կցական դարձած նման բարդություններից դատ աշխարհաբարում առաջ են եկել նաև միայն դերանուններից, այն էլ ու շագկապով, կազմված բաղձնական բարդություններ, որոնք երկու խմբի են բաժանվում. մի խումբը կազմվում է պարզապես նույն դերանվան կրկնությամբ, ինչպես՝ ևս ու ես, ինն ու ինն, ինն ու ինն, ինչ ու ինչ, մեկ ու մեկ, մեկ ու մեկ, ով ու ով, իրեն ու իրեն (իրեն-իրեն), այս ու այս, էսպես ու էսպես, մեկն ու մեկն և այլն: Օրինակներ՝ ևս ինն ու ինն հաշիվ կանեմ, թե ո՞ր հասա, թե ի՞նչ տեսա (ԱԽ, ԵԺ, 1, 132), նրա խմբագիրն ինչ ու ինչ կարգադրություն է արել (ՂԱ, ԵԺ, 3, 185), —Մեկն ու մեկն էնք, մի՞ բաշխիր, քանիկա, մի՞ քաշվիր (ԹԲ, Պ, 4, 515), Գեղին մեջ միայն ինն ու ինն... երկրի երևույթներուն վրա կժաժե պոկները (ԹԿ, ԳԿ, 43), Հիմի էլ դուք եք ձեզ ու ձեզ էջմիածնի ժողովը ետ կանչում (ՀԹ, ԵԺ, 4, 170) և այլն:

Մյուս խումբն էլ կազմվում է ցուցական տարբեր դերանունների հարադրությամբ, ինչպես՝ այս ու այն, էս ու էն (ԲԲ, Ե, 1, 234), այս ու այնտեղ/այն և այնտեղ, այնտեղ ու այնտեղ: Օրինակներ՝ նա մոտենում է այս ու այն քարին (ԱԲ, Ե, 1, 234), Շատ էլ խնամախոսություններ է զրկել էս ու էն թագավորի աղջկանն ուղկու (ՀԹ, ԵԺ, 3, 252), Մոտ մի տասնյակ հյուրեր այս ու

14 Տե՛ս այդ մասին Հ. ր. Աճառյան. Լիակատար քերականություն հայոց լեզվի. Կ. 1, Երևան, 1952, էջ 247—249:

15 Մ. Արեգյան. Հայոց լեզվի տեսություն, էջ 176:

16 Աշխարհաբարում դրանք կցական բարդություններ են դարձել:

այնտեղ առանձին-առանձին նստած, լուռ ճաշում էին (Շ., եժ, 1, 430), հոփերը նորից Այս ու այնտեղ Սեր երկրագնդի հին մաշկն են քորում (ՊՍ, եժ, 2, 113) և այլն:

Բաղճյուսական բարդությունների ստեղծման ու հարստացման գործում առավել մեծ դեր է կատարում, սակայն, բառ խոսքի մասը: Իր բովանդակությամբ ու բնույթի համապատասխան լանդշաֆտ է գալիս բառակազմական մի քանի դրսևորումներով և բարդություններ կազմում՝

ա) Բայարմատների հառադրությամբ, ինչպես՝ անց ու դարձ, առուտուտ, առ ու ծախ, առ ու կուլ, առ ու փախ, ասուլիս, բաց ու գոց, բաց ու խուփ, բաց ու բող, ելումուտ, եռ ու զեռ, եռ ու խոր, երբ ու դարձ, եփ ու բուխ, լաց ու կոծ, խանձ ու խորով, կալ ու կապ և այլն:

բ) Տարբեր բայերի հարադրությամբ, ինչպես օրինակ՝ զնալ ու զալ/զալ ու զնալ («Ճիշտ է, այդ զնալում Միմնը Լրեի չկարողանա... աղատ զալ ու զնալ», ՇԲ, Բ., 147), տանել ու բերել, լալ ու խնդալ, տալ ու առնել («Ինքս ինձ հետ տալ ու առնելս ավարտելուց հետո հանգիստ նստելից գլխավոր ինձենների անհանգստացած աչքերին...», ԱՄ, ԱՃ, 162, 63) և այլն:

գ) Նույն բայի կրկնությամբ, ինչպես՝ ապրել ու ապրել, զնալ ու զնալ, մնալ ու մնալ («Բայց փոստն էնքան չիքն էին, որ ետ եկա, էն է ինչ մնաց ու մնաց», ՇԲ, եժ, 5, 308), տանել ու տանել, կա ու կա և այլն:

Նակրայների հառադրությամբ ևս բաղճյուսական բարդություններ են կազմվում: Առավել սովորական են տղի մակրայով կազմությունները, ինչպես՝ առաջ ու առաջ, առաջ ու ետ, առաջ նարկությունները, ինչպես՝ հա ու չէ (խոսակց.), միայն ու լոկ, միայն ու միայն, իսկ ու իսկ // վեր ու վար, տակ(ե) ու վեր, հոս ու հոն (առևմտի.), բայց նաև՝ քեր ու դեմ, վաղ ու վաղ, հառ ու հավառ, հեշտ ու շուտ, հիմակ ու հիմա, մեկ ու մեկակ, միշտ ու շարունակ, ավելի ու ավելի և այլն:

Գալով, վերջապես, ոչ նյութական (երկրորդական) խոսքի մասերին, պետք է ասել, որ դրանցից բաղճյուսական բարդություններ են կազմում միայն եղանակավորող բառերն ու ձայնարկությունները, ինչպես՝ հա ու չէ (խոսակց.), միայն ու լոկ, միայն ու միայն, իսկ ու իսկ // իսկ և իսկ..., ախ ու վախ, ախ ու օխ, ախ ու վիշ, բայ ու բույ, քախ ու բուխ, հայ ու հույ, շախ ու շուխ, վաշ ու վիշ, վալ ու վույ և այլն: Բնագրային օրինակներ. Աստուծ օխենի ա «հան», օխենի ա «չէն», անիծելի ա «հա ու չէն» (ԱՂ, Առ., 160), Ախ, իսկ ու իսկ քո պղտիկությունն է (ՔԲ, Պ, 4, 637), — «Ողբի» կատեններ մենք այս առավոտ Միայն ու միայն հալալ Վանու մոտ (ՀՍ, ՆԴԲ, 310)..., Կնանոնց սգի ու ողբի բայութույիցը կտակի ձենն էլ չէր լրջվում (ՊՊ, եժ, 1, 104), Հարկավոր է այսուհետև անդամատել մեր գրականությունը անիմա, թեև շատերը վալ ու վույ բարձրացնեն (ՂԱ, եժ, 3, 185), Մայրը վաշ ու վիշով ներս ու դուրս էր անում (ՄԴ, Բով., 64), Օրերս անցան ախ ու վախով (ԱԻ, եժ, 1, 18) և այլն:

Այսպիսով՝ շաղկապներից ու կապերից բացի բաղճյուսական բարդություններ են կազմվում գոյականների, ածականների, թվականների, դերանունների, բայարմատների ու բայերի, մակրայների, եղանակավորող բառերի և ձայնարկությունների հարադրությամբ: Հստ որում՝ հիմնականում նույն խոսքի մասին պատկանող բառերն են, որ ու շաղկապով միաձուլվում ու բարդություն են տալիս: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե ցանկացած գոյականով, ածականով կամ այլ բառերով անխորհր ու անարգել կարելի է բաղճյուսական բարդություն կազմել. ումենեի՛ն: Ինչպես կատարված քննությունն է ցույց տալիս, բաղճյուսական բարդություններն իրենց յուրահատուկ ձևաբանական կառուցվածքն ու առանձնահատկություններն ունեն և կազմվում են ոչ միայն գլխավորապես կարճ, այլև այնպիսի բառերի հարադրմամբ, որոնք հընչերանգով ամբողջանալով՝ առնչակից նշանակություններ, այլևայլ իրողությունների միջև դրսևորող կապեր ու հարաբերություններ են արտահայտում, ներկայացնելով բավական հետաքրքրական պատկեր այդ տեսակետից ևս:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ, Ե.—Ա. Բակունց, Երկեր, հ. 1, Ե., 1974:

ԱԻ, եժ.—Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1—2, Ե., 1973—74:

ԱՂ, Առ.—Ա. Ղանալանյան, Առածանի, Ե., 1960:

ԱՄ, ԱՃ.—Ա. Մեխակյան, Այս ճանապարհը, Ե., 1977:

ԲՎ, Երկ.—Բ. Վերդյան, Երկնոսություն, Ե., 1980:

ԳԲ, ՊՏ.—Գ. Բալասանյան, Պատուհանի տակ ծղրիղն է երգում, Ե., 1975:

ԳԻ, ԱՏ.—Գ. Էմին, Այս տարիքում, Ե., 1968:

- ԳՄ, ԵԺ.—Դ. Մանարի, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1975:
 ԳԵ, ՄՈ.—Գ. Նարեկացի, Մ.—, և Ողբերգության, Ե., 1979:
 ԳՍ, ԵԺ.—Դ. Սունդուկյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1973:
 ԴՎ, Բ.—Դ. Վարուժան, Բանաստեղծություններ, Ե., 1955:
 ԵԵ.—Երեկոյան Երևան:
 ԵԶ, ԸԵ.—Ե. Զարենց, Ընտիր երկեր, Ե., 1955:
 ԲԶ, ԳԿ.—Բլկատինցի, Գյուղին կյանքը, Ե., 1966:
 ԵԱ, ԵՎ.—Ե. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 1945:
 ԽԴ, ԲԿ.—Խ. Դաշտենց, Խանչարների կանչը, Ե., 1979:
 Հ. Աղբ.—Սաղ.—Հ. Աղաբաբ, Մաղկեփունջ, Ե., 1976:
 ՀԲ, ԵԺ.—Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1—6, Ե., 1940—1950:
 ՀՀ., ԵԺ.—Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 1—2, Ե., 1964—1965:
 ՀՀՄԲԲ.—Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Ե., 1979:
 ՀՇ., ԲՀ.—Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, Ե., 1958:
 ՀՍ, ՆԴԲ.—Հ. Սալյան, Նարյան գալար բարդի, Ե., 1958:
 ՎԱ, ԵԺ.—Վ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 1—4, Ե., 1962—1963:
 ՄԴ. Բով.—Մ. Գալստյան, Բովտուն, Ե., 1974:
 ՅԶ, ՄՀ.—Յ. Զարյան, Միջատորայգ, Ե., 1975:
 Շ, ԵԺ.—Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1958:
 ԸԲ, Բ.—Ը. Թաթևկյան, Բալենի, Ե., 1980:
 ԾԿ., ԵԺ.—Ծ. Կուրդիսյան, Երկերի ժողովածու, Ե., 1947:
 ՊԳ., ԵԺ.—Պ. Պետրյան, Երկերի ժողովածու, հ. 1, 2, 7, Ե., 1962—1964:
 ՊՍ, ԵԺ.—Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1—4, Երևան, 1974—1975:
 ՋԲ.—Ջիվանու քնարը, Ե., 1959:
 ՍԽ., Հ.—Ս. Խանզադյան, Հայրենապատում, գիրք Ա—Բ, Ե., 1980—1981:
 ՎԿ, ԳԼ.—Վ. Խելումյան, Գիրք լրացության, Վրաց. առաջին, Ե., 1966:
 ՎՏ, ԵԺ.—Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1960:
 Բ., ԵԺ.—Բաժոռ, Երկերի ժողովածու, հ. 4—5, Ե., 1963:
 ԲԹ., Պ.—Բ. Թափալցյան, Պատերազմ, հ. 4, Ե., 1965:

МОРФОЛОГИЧЕСКАЯ СТРУКТУРА

СОЕДИНИТЕЛЬНЫХ СЛОЖНЫХ СЛОВ АРМЯНСКОГО ЯЗЫКА И ИХ ЛЕКСИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА

Доктор филол. наук А. С. МАРГАРЯН

Резюме

В системе несинтетического армянского словосложения особое место занимают соединительные сложные слова. Они представляют собой один из типов аналитического словообразования и отличаются своеобразной морфологической структурой. Их компоненты соединяются друг с другом с помощью соединительного союза *ու* (реже *և* «и») и составляют словесное единство, выражающее одно общее значение. Компоненты соединительных сложных слов не только связаны семантически, они в большинстве случаев являются односложными словами. Эти и другие вопросы подробно рассматриваются в статье. Одновременно показывается, какую словообразующую роль играет соединительный союз *ու* («и») в армянском языке.